



California's protection & advocacy system
Toll-Free (800) 776-5746

Հաղորդակցման օժանդակ միջոցների ստացում California Department of Rehabilitation-ի (DOR) (Կալիֆորնիայի Աշխատունակության վերականգնման վարչություն) միջոցով

Հոկտեմբեր 2019թ., Հրապ. #7149.10 - Armenian

1. Հաղորդակցման օժանդակ միջոցների օրինակներ

«Հաղորդակցման օժանդակ միջոցները» սարքեր կամ ծառայություններ են, որոնք կարող են օգնել հաշմանդամություն ունեցող անձին հաղորդակցվել: Օրինակ՝ Augmentative and Alternative Communication-ը (AAC) (լրացուցիչ և այլընտրանքային հաղորդակցման միջոցներ), Assistive Technology-ն (AT) (օժանդակող տեխնոլոգիա) կամ «Special Adaptive Equipment»-ը (հատուկ ադապտիվ սարքեր) սարքեր են, որոնք կարող են օգնել մարդուն հաղորդակցվել: Department of Rehabilitation-ի (DOR) (Աշխատունակության վերականգնման վարչություն) համակարգում հաղորդակցմանն օժանդակող սարքերը կոչվում են «վերականգնողական տեխնոլոգիա» և ներառում են «օժանդակող տեխնոլոգիաներով սարքերը»:

Այստեղ բերված է հաղորդակցման օժանդակ միջոցների մի քանի օրինակ.

- JAW-եր (Job Access with Speech) (աշխատանքի կատարում խոսքի միջոցով) և Էկրանից կարդալու ծրագրերի այլ տեսակներ,

- Dynavox և այլ Speech Generating Devices (SGDs) (խոսքախթանիչ սարքեր),
- PEC-եր (Picture Exchange Communication System) (նկարների փոխանակմամբ հաղորդակցման համակարգ) և նկարներով հաղորդակցման համակարգերի այլ ձևեր,
- Տառատախտակներ կամ այբբենական տառատախտակներ,
- Բրայլյան գրով գրված կամ մեծ տառերով տպած փաստաթղթեր,
- Այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են սուրդոթարգմանիչները կամ հաղորդակցում ապահովող գործընկերները,
- Փաստաթղթերի բարձրաձայն ընթերցում,
- Փաստաթղթեր, որոնք ուսումնասիրման նպատակով տրամադրվել են նախապես/լրացուցիչ ժամանակով.
- Պարզեցված լեզվով գրված փաստաթղթեր,
- Թարգմանչի կամ այլ օժանդակ ծառայությունների օգտագործում:

2. Հաղորդակցման օժանդակ միջոցների ստացում DOR-ից

DOR-ը կարող է վճարել այն «վերականգնողական տեխնոլոգիայի» համար, որն անհրաժեշտ է ձեզ DOR-ի ծառայությունների գնահատման և ձեր զբաղվածության նպատակին հասնելու համար: DOR-ը կարող է գնահատել ձեզ՝ տեսնելու, թե արդյոք օժանդակող տեխնոլոգիայով սարքը ձեզ թույլ է տալիս կատարել որոշակի առաջադրանքներ կամ ձեզ համար հեշտացնում կամ անվտանգ է դարձնում որոշակի առաջադրանքների կատարումը: Օժանդակող տեխնոլոգիայով ծառայությունները, որոնք DOR-ը կարող է տրամադրել, կարող են լինել սարքի գնումը, ընտրությունը, տեղադրումը և ձեր (և ըստ անհրաժեշտության ուրիշների) ուսուցումը, թե ինչպես պետք է օգտագործել սարքը: Եթե դուք DOR-ի

շահառու եք և ունեք հաշմանդամություն, որը ձեր զբաղվածության նպատակներին հասնելու համար պահանջում է հաղորդակցման օժանդակ միջոցներ, ապա այդ միջոցները և ծառայությունները պետք է ներառվեն ձեր Individualized Plan for Employment-ում (IPE) (զբաղվածության անհատականացված ծրագիր) որպես վերականգնողական տեխնոլոգիա:

Պետական ծրագրերով, օրինակ՝ DOR-ի կողմից տրամադրվող արդյունավետ հաղորդակցման իրավունքի վերաբերյալ մանրամասն տեղեկատվության համար տե՛ս U.S. Department of Justice-ի (ԱՄՆ Արդարադատության վարչություն) *ADA-ի պահանջներ. արդյունավետ հաղորդակցումը*, հղում՝ <https://www.ada.gov/effective-comm.htm>:

3. Ինչպե՞ս բողոքարկել հաղորդակցման օժանդակ միջոցի մերժումը:

Կարող եք դիմել վարչական վերանայում կատարելու կամ միջնորդության և(կամ) անկողմնակալ լսումներ անցկացնելու համար: DOR-ի բողոքարկումների մասին մանրամասն տեղեկատվության համար տե՛ս *California Department of Rehabilitation-ի (Կալիֆորնիայի Աշխատունակության վերականգնման վարչություն) Բողոքարկման տարբերակների և ընթացակարգերի տեղեկատվական թերթիկը, Զրապ. #5530.01, հղում՝*

<https://www.disabilityrightsca.org/publications/california-department-of-rehabilitation-appeals-options-process-fact-sheet>

Disability Rights California-ն (Կալիֆորնիայի Հաշմանդամություն և Լենեցող անձանց իրավունքների պաշտպանության կազմակերպություն) այս տեղեկատվական թերթիկը պատրաստել է «Հաղորդակցման հաշմանդամությունների մատչելիության ցանց» ծրագրի շրջանակում: Ծրագիրը նախատեսված է հաղորդակցման օժանդակ միջոցների օգտագործումը պաշտպանող առաջնորդների ցանց ստեղծելու, նրանց ուսուցանելու և ակտիվ աշխատանք ծավալելու նպատակով: Այն ֆինանսավորվում է «Ability Central» կազմակերպության դրամաշնորհով, որը նախկինում անվանվում էր «Disability Communications Fund» (Հաշմանդամության հաղորդակցման հիմնադրամ): «Ability Central» կազմակերպությունն աջակցում է այն ծրագրերին և ընդունում է այն տեխնոլոգիաները, որոնք օգնում են հաշմանդամություն ունեցող կալիֆորնիացիների հաղորդակցման և մատչելիության կարիքների բավարարմանը: Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այցելեք՝ <http://dcfund.us/>